ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 82 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 06-Ի N 16-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 13-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 06-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության հաստիքացուցակը հաստատելու մասին» N 16-Լ հրամանի հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանն ուժի մեջ մտած համարել սույն թվականի դեկտեմբերի 14-ից:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ
20.12.2023թ.

Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի

նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 20 -ի N 82 - L հրամանի

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023Թ. ՀՈՒԼԻՍԻ 06-Ի N 16-Լ ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ»-ՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ

1. Կրճատել՝

	Պաշտոնի անվանում	վարչական/ հայեցողական/ փրկարարական ծառայող/ քաղաքացիական ծառայող/ տեխնիկական սպասարկող	Կոչում	Քանակը	ԶՀՄ	Պաշտոնի խումբը
1. ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ						
1.1. Ղեկավարություն						
1.1.4. Ծառայության կազմակերպման վարչություն						
1.1.4.1. Ծրագրերի, պլանների վերլուծության և համակարգման բաժին						
1	բաժնի պետ	փրկարարական ծառայող	գնդապետ	1		34
2	ավագ հրահանգիչ	փրկարարական ծառայող	փոխգնդապետ	5		29
3	հրահանգիչ	փրկարարական ծառայող	մայոր	2		24
	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 0-0-8-0-0-0			**8**		
	ԸՆԴԱՄԵՆԸ ԿՐՃԱՏՎՈՒՄ Է՝ 0-0-8-0-0-0			**8**		